




ՀԱՅԿԱՅԻՆ
ԳՐԱԳՈՐԾԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԽՄԵԼԻՄ

Գինն է 10 կ. Գառառներում 12 կ. 1911, Շաբաթ, ՅՈՒԼԻՍԻՆԻՑ -ին. Թիֆլիս. № 28


Կ Ո Վ Կ Ա Ս Ե Ա Ն Հ Ա Մ Ա Լ Ս Ա Ր Ա Ն Ի Հ Ա Ր Ց Ը



Я.Т.С.БЫХОВА

—Ընի թէ չինի... ահա մի հարց, որ մեզ խիստ տանջում է. որն է լաւը, համալսարանը՝ եթէ լինի՝ ի՞նչով լինի, իսկ եթէ չինի՝ ի՞նչու չինի.

ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ



VI Տարի

ՄԱՔԱԿԱ

VI Տարի


Երզնիստանական-սատիրական պատկերազարդ շաբաթաթերթի
ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ԱՄԵՆ ՇԱԲԱԹ ԱՆՈՒՓԱՆ

Պաշտօնական օրգան պետական, ազգային, հասարակական և օտարազգի բոլոր մեծ և փոքր, յայտնի և անյայտ, պիտանի և անպիտան, փրկիչ և գլխիչ, անկեղծ և կեղծա-
չոր գործիչ-կորզիչների և խայտառակիչների:

Անհրաժեշտ բերք բոլոր բնագիտական համար

«ԽԱՔԱԲԱԼԱ» շատերին ծիծաղեցնում է, շատերին էլ ցաւեցնում, բայց ոչ ոքի հետ
ոչ բարեկամ է և ոչ թշնամի: Խմբագրին կարելի է տեսնել, երբ քէֆերիդ ուզի:
Հասցէն՝ Тифлиς Музейный пер., редакция „ХАТАБАЛА“.

Արտասահմանից՝ Tiflis Caucas Redaction «Khatabala»
Ժամանակաւոր խմբագիր՝ Ս. Մուրայանցան



«ԽԱՔԱԲԱԼԱ»

Բ Ա Ք Ա Ն Ե Գ Ի Ն Ն Է

Տարեկան	5 ռ.
Կէս տարին	3 »
Երեք ամիսը	1 » 50 կ.
Ամիսը	— 50 »
Թիֆլիսում տարեկան	4 » — »

«ԽԱՔԱԲԱԼԱ»-ի բաժանորդները կարող են
ստանալ «ՍՈՒՐՅԱՆ ԴԱԿ» օրաթերթը պակաս
վճարով, երկուսին միասին փոխանակ 15 ռ.

Տարեկան	12 ռ.
Կէս տարին	6 »
Երեք ամիսը	3 » 50 կ.
Մէկ ամիսը	1 » 20 »

100 տարով բաժանորդագրել ցանկացողին
75 % զեղջ:

Ձրի կարգացողներին պէտք է նկա-
րենք գլխիվայր:

«ԽԱՔԱԲԱԼԱ» ՕՐԱՅՈՅՑԸ

1911 ՅՈՒԼԻՍ 31 օր



Суббота ՀԱԲԱԹ Ծոցոտո
Լուսնի 27

Մ Ա Ր Փ Ը

Կեղևս փայլուն, միջուկս դժգոյն,
Գիշերը անքուն, ցերեկը արթուն,
Վայ իմ դև հոգուն:

Մինչև իրիկուն նստած խանութում
Մարդիկ եմ խաբում և միշտ ախ քաշում,
Վայ իմ սև հոգուն:

Բայց կեանքս անցնում—թռչում է թռչում,
Տարիքս վաթսուն—մեղքերս անհուն,
Վայ իմ ծեր հոգուն:

Եւ արդէն ծեր եմ—բայց միլիոնէր եմ,
Վեց տղի տէր եմ, բայց ախ անտեր եմ,
Այ ձեզ դրուժինս,
Վայ իմ խեղճ հոգուն:

Ես կեանք դատեցի—անկեանք մնացի,
Ես միշտ ձգտեցի և կոյր կարծեցի...
Եւ ինձ խաբեցի:

Բայց ո՞վ չի կարծում
Եւ իրեն խաբում:

Այո, բոլորս ծնում ենք, ծնում,
Կարծում, կասկածում, կարծելով մեռնում...
Վայ մեր խև հոգուն

ԽԵՆՔ



ԻՆՉՊԷՍ ՀՐԱՍՏՆՑՆԵ

(Օգտակու իրաւունքը վերապահւում է բոլորին)

Թող օրհնւած լինի այն օրը, երբ սրա-
նից երեք տարի առաջ իմ ամառանոցի աէ-
րը ինձանից ամառանոցի պայմանաւորեալ
վճարն էր պահանջում, զանազան սպառնա-
լիքներով, իսկ ես զբաւանումս միայն մէկ
և կէս բուրբի ունէի և, եթէ չեմ սխալում,
նաև մի քանի գոռո:

Երկար ստատունումներից յետոյ ես մի նոր
հնար գտայ:

Ուղևորեցի իմ ամենալաւ ընկերոջս մօտ,
ծաղրական տոնով նկարագրեցի իմ դժբախ-
տութիւնս ու աւելացրի.


—Միւրեւի ընկեր Գարեգին, փոխ տուր
ինձ 200 բուրբի: Իմ փողային գործերը
միայն միառժամանակ է որ խճճել են,
բայց երեք ամսից ես կըկանոնաւորեմ և
կըվերադարձնեմ...

Ես տեսայ, ինչպէս փոփոխեց ընկերոջս
արտայայտութիւնը, ինչպէս թխպեց նրա
դէմքը և կարծես արդէն զղջում էր իր ա-
նելիք քայլի համար:

Ձէ որ ես էի, որ շարունակ կրկնում էի՝
պարտք տալը ընկերոջ՝ ամենալաւ միջոցն
է ընկերական յարաբերութիւնը փշացնելու:

Բայց հաւանական է, որ Գարեգինը յի-
շեց մեր տան քաղցրաւենիները, թէ ինչպէս
լաւ դաշնամուր է նւագում իմ ազգականը,
ինչպէս լաւ է մեզ մօտ գիշերը սեղանա-
տանը և ես ինչպիսի անփոխարինելի ընկեր
եմ նրան թղթախաղում:

Ամպերը անցան նրա դէմքից, նա շշնջաց.
—Դէհ ինչ անեմ, վերցրու... Միայն գի-
տես... խնդրում եմ երեք ամսից անպատ-
ճառ վերադարձնես:



«ԽԱԹԱԲԱԼԱՍԵՑ»

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Առ ձեռն կրօնական գրականությանը

Երկու ամիս ու կէս անակատելի անցան, որից յետոյ Գարեգինը ինձ իմ պարտքը յիշեցրեց:

—Բայց դու... մի մոռանայ պայմանաժամը, ես ինքս նոյնպէս կարիքի մէջ եմ... կինս... երեխաները... Ես կայծակնահար եղայ: Իմ գործերը նախկին վատ դրութեան մէջ էին: Իմ որբացած զբաղանս հարստացել էր միայն հինգ բուլբուլ:

Մի շաբաթից յետոյ կինս նորից նկատեց.

—Այսպէս ուրեմն, բարեկամս, յիշիր որ երեքշաբթի լրանում է ժամանակը:

—Հանգիստ մնա:

Գարեգինը կարող էր հանգիստ մնալ, իսկ ինձանից էր որ կորել էր հանգստութիւնը: Ստանան գիտէ թէ ինչ պէտք է տայի ընկերոջս, քանի որ ոչ մի տեղից ստանալու յոյս չունեմ:

Եւ յանկարծ իմ մէջ յղացաւ մի լաւ միտք: Ես յիշեցի որ Վաղինակը իմ նոյնպիսի ընկերն է, ինչպէս և Գարեգինը:

Ես երկու ժամից նրա կարիքներուն էի, ծխում էի նրա սիրգարներից ու խմում բենեդիկտին, ես ուղղեցի տեղումս ու հարցրի.

—Հասկանում ես, ժամանակաւոր դժարութեան եմ հանդիպել, պէտք է պարտքս վճարեմ... մի բոլորովին չնչին գումար, ընդամենը 250 բուլբուլ: Խնդրում եմ բարի եղիր փոխ տալու մի այդքան գումար ինձ երեք ամսով: Բոլորիս կարող է այդպիսի բան պատահել:

Ստանալով 250 բուլբուլ, ես վերադարձրի Գարեգինին իմ պարտքը, իսկ մնացեալ 50 բուլբուլ իս հիւրասիրեցի ընկերներս: Թող բոլորը գիտնան, որ իմ գործերը վատ չեն գնում:

Ես հանգստացայ, քանի որ ես գիտէի իմ ապագայ անելիքը:

Բայց իմ կինը, իբրև ամեն բանից վախեցող, յուզեց ու ախ քաշեց:

—Ախ, Արշակ, Արշակ, որտեղից քնք կարող ենք գտնել Վաղինակի փողերը: Ո՛հ ինչ անտանելի կացութիւն է մեզ վիճակաւ:

Ես քլթլացի:

—Իսկ ինչ վերաբերում է Գարեգինին, ես նրանից փոխ կառնեմ և կըտամ Վաղինակին. դժարութեամբ նա ինձ կըմերժի, որովհետև ես առաջին պարտքը իր ժամանակին վճարեցի: Բա ի՞նչ ես կարծում սիրելիս, ես նրանից ոչ միայն երկու հարիւր՝ այլ երեք հարիւր բուլբուլ կըխնդրեմ:

Պարզ է՝ որքան գաղափարը հաստատ է լինում, այնքան նա հեշտութեամբ է ընդունւում: Իմ գաղափարը կնոջս շատ դուր եկաւ:

—Իսկ չի՞ տայ արդեօք նա 400 բ. —հարցրեց կինս, որով կարելի կըլինէր գնել ինձ համար մի նոր գլխարկ, այլապէս ես ստիպւած կըլինեմ շարունակ միևնոյն գլխարկը գործածել: Ես Գարեգինից փոխ վերցրի 400 բուլբուլ ու տւի նրան, երբ Վախտանգից ստացայ 500 բուլբուլ:

Գարեգինն ու Վաղինակը սկսեցին առանց ընդհատելու ինձ շարունակ փող տալ պարտք, որովհետև ես երկուսին էլ իր ժամանակին էի վճարում և մի քանի անգամ նոյն իսկ իր ժամանակից առաջ: Իմ զըրպանում շարունակ փող էր լինում, իսկ պարտքս օրաուր մեծանում էր և ես վախլում էի: Բայց մի դժբախտ օր Գարեգինը մերժեց ասելով:

—Աստուած վկայ, 5000 բուլբուլց աւելի չեմ տայ, եթէ անգամ սպանես: Փոխառութիւնը այնքան էլ յաճախ չէր ընթանում: Ես խնդրեցի 8 հազար, կարծելով, որ 5 հազարը կըտամ Վախտանգին, իսկ 3000-ով կըզնեմ տեսածս ամառանոցը, որի համար ես ահագին գրաւական էի տւել:

Կինս մտութեամբ կախեց և սկսեց մըթմըթով վիրաւորելով, որ ինքը արդէն ամենին պատմել է իրենց նոր գնելիքը կաւածքի մասին... նա նոյն իսկ նկատեց, որ կարող է Վաղինակին չվճարել:

—Հապա խօս չենք կորցնի մեր տւած գրաւականը:

—Ես զարմացայ:

—Ի՞նչպէս, դու ուղում ես, որ ես գործեմ անպատուութիւն, և դու իմ կի՞նն ես:

—Ամառանոց գնիր, ամառանոց գնիր, հեկեկում էր կինս:

—Ամառանոցը կըլինի—վճռապէս յայտնեցի նրան:

Եւ իսկապէս, որ եթէ Գարեգինին իմ պարտքը վճարում է Վախտանգը և Վախտանգինն էլ Գարեգինը, ի՞նչու մի այդպիսի բան էլ չստեղծեմ միւս ընկերներին միջև:


Կարծում եմ, որ նրանք նոյնպիսի ընկերներ են. նրանք ինչո՞վ են պակաս Գարեգինից ու Վախտանգից և—քանի որ դրանցից երկուսը յիմարի նման սիրահարւած էլ են կնոջս:

Ես իմ փոխառութիւնը ընդարձակեցի, ներկայումս իմ 14 ընկերները վճարում են իրար պարտքը, որն իր ընդհանուր բարդութեամբ 50,000-ի է հասնում:

Պարտատէրերը շատ են հպարտանում, ես մաքուր եմ պարտքերը վճարելում: Ես ունեմ մի սեփական տուն և մի ամառանոց:

Ինչո՞վ կըվերջանայ սա, չգիտեմ, բայց և այնպէս ես կընդարձակեմ իմ ընկերների շրջանը, որոնց ես միշտ պատուում եմ լաւ ընթրիքներով, սիրաշահում եմ նրանց կնոջովս և խաղում չնչին գումարներով թուղթ:

Ա. Գոմ.



I. Առաջնորդութիւն

1. Օրագիր ստորագրել չկատարելու համար.
2. հրահանգներ տալ ուրիշներին տւած լինելու համար.
3. օրէնքների, կանոնների կատարումն ըստ հանգամանաց.
4. անարժանների ձեռնադրութիւն.
5. արժանաւորաց հալածում.
6. 10 ժամ քնել, հինգ ժամ ուտել, երեք ժամ թէյ հրամցնել, երկու ժամ մօրուք սանրել, մնացեալ ժամերն անյայտ:

II. Գործակալութիւն

1. Հոգևոր իշխանութեան հրամանները գրաւոր կրկնել.
2. տարին երկու անգամ եկեղեցի յաճախել ռոճիկ ստանալու.
3. սպիտակ մոտիւններ (Tabula rasa) ներկայացնել տոնին, հանգիստաւոր յուզարկաւորութեանց ժամանակ փողոցում չորքոտանիք հալածել:

III. Տիրացուութիւն

1. Աշխատածը տէրտէրին տուող.
2. տէրտէրի տան առևտուրն անող.
3. քրիստոնեայ պարիսպ՝ բողոքելու իրաւունքից զուրկ.
4. յաւիտեան անչափահաս.
5. եկեղեցում բարձր երգող, իսկ այլուր՝ համը Չաքարիա:

IV. Բահաճայութիւն

1. Քելիխի նախագահ.
2. հոգևոր թամաղա.
3. մեռելի փողբաղչի.
4. բարեխիղճ երեցփոխաններից բողոքող.
5. անբարեխիղճների բարեկամ.
6. իւրը=ИВРЪ.
- Մեղս=МЕСЬ կարգացող:

V. Ժամկոչութիւն

1. Տէրտէրի պրէմիէր ծառայ.
2. երէցփոխի բազմօսչիկ.
3. երեկոյեան գիշերապահ.
4. գող քահանայից հաշւապահ.
5. զանգակների երաժիշտ.
7. սուրբ սեղանի համալ:

VI. Վարդապետութիւն

1. Ապահով կեանք.
2. աշխատանքի կըրճատումն.
3. երազող եպիսկոպոսութեան.
4. վառ երեակայութիւն... մասին:

VII. Տեսիլ

1. Վանքի հարս.
2. վարդապետական խոհարարուհի:

VIII. ?

Այս մէկի համար պիտի մի առակ պատմեմ.—

Վանայ ծովակի Դատվան նահանգում ապրում էր մի գգիր, որը գիւղացւոց ամեն չարիք հասցրել էր: Նա միևնոյն ժամանակ իշխանութեան լրտեսն էր—չարութիւն անելը նրա ամենօրեայ կերակուրն էր:



Դ Ի Պ Լ Ո Մ Ա Տ Ն Ե Ր Ի Դ Է Մ Ք Ե Ր Ը




Նւէր անցեալ, ներկայ և ապագայ դիպլոմատները՝ ազգերի բախտ որոշողները:



Ա Մ Ա Ռ Ա Ն Ո Ց Ա Յ Ի Ն Կ Ե Ա Ն Ք

ԷՔՍԿՈՒՐՍԱՆՏՆԵՐ...



Մահան օրերը մօտեցան: Նա մտածում էր—միթե՞ այսուհետև չարիք չպիտի կարողանամ կատարել—միթե՞ ինձնից յետոյ գիւղը պիտի հանգիստ լինի: Ձէ, անկարելի է, չարիքը մահանիցս յետոյ էլ պիտի շարունակւի. գիւղը ինձնից յետոյ չպիտի գոյութիւն ունենայ: Նախագիծը պատրաստ էր:

Մահան անկողնումն պառկած՝ գզիրը իր մօտ կանչեց գիւղի առաջաւորներին և այսպէս խօսեց. «Կեանքիս մէջ միայն չարիք եմ գործել ձեզ համար. սխալս զգում եմ, խիղճս անհանգիստ է, ներողութիւն եմ խնդրում բոլորիցդ: Այս աշխարհից հեռանալուց առաջ՝ մի խնդիր ունեմ, յուսամ չէք մերժի, որին ես արժանի չեմ—իմ մարմինը չթաղէք հասարակաց հանգստարանում, ես արժանի չեմ որ իմ մարմինը հանգստանայ այն հողում, որին ես միշտ թշնամաբար եմ վերաբերել: Մահանիցս յետոյ ինձ կըմերկացնէք, մարմինս կախ կանէք ծառից, թող երկնքի թռչունները դիակս ուտեն, հողին արժանի չեմ»:

Միամիտ գիւղացիք կարծելով թէ խղճի խայթն է թելադրում նրան այս խոստովանութիւնը, ներողամիտ եղան դէպի զջուհակ յանցաւորը և խոստացան կեանքից հրաժարողին՝ նրա կտակը իսկութեամբ կատարել:

Մեռաւ չարագործը: Գիւղացիք կատարեցին նրա խնդիրը—մարմինը մերկ՝ ծառից կախ արին:

Իշխանութիւնը նկատեց այս բանը, խիստ քննութիւն նշանակեց գիտնալու, թէ ով է վստահացել իշխանութեան պաշտօնէին խեղդել:

Գիւղացւոց անմիդ խոստովանութիւնը չհամոզեց իշխանութեան քննչին—գիւղը յանցաւոր ճանաչեց և ուբակոծութեան ենթարկեց:

Իւր կենդանութեան օրօք միայն չարիք գործողը, մահից յետոյ էլ շարունակեց իր չարութիւնը—գիւղը ջնջեց:

Ս...ս.

Փողը

Փողը՝ բախտն է, որ մարդ կրում է իր զբոսանում:

Եթէ նա ձեռքը տանում է զբախտ և չի զբոսանում այնտեղ փող, նշանակում է, որ բախտը կորել է:

Փողը ոչ միայն մարդու բախտն է, այլ և նրա տաղանդը:

Տաղանդը կարելի է մանրացնել փողով, իսկ փողը կարող է փոխարինել տաղանդին:

Տաղանդ թէ բախտ, բայց այնուամենայնիւ մարդկանց հարկաւոր է փող, իբրև առողջութիւն և առողջութեան նման մի բան մարդ զգում է, երբ կորցնում է:

Այստեղ արդէն ոչ մի տաղանդ չի օգնի և մարդը հիւանդանում է փողի բացակայութեան շնորհիւ: Ամենավատ հիւանդութիւնը՝ փող չունենալն է:

Ամենալաւ առողջութիւնը փող ունենալը: Փող չունենալը համահաւասար է խելք չունենալուն:

Ոնկը ունենալ և փող չունենալ՝ դա էլ մի բան չէ:

Աւելի վտանգաւոր է: Ահա գուցէ այդ է պատճառը, որ շատ յաճախ անխելքների մօտ էլ փողեր է գտնուում: Նայեցէք դուք մեր հարուստներին, նրանց մեծամասնութիւնը փող ունի՞... Չենք հաւատում:

Բուդ

ՄԻ ՔԻՉ ՀՐԱՊԱՐԱՆԱԿԱԿՈՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՔԻՉ Է՛Լ ԽԱՅՏԱՌԱԿԱԿՈՍՈՒԹԻՒՆ

ՄԵՌՆԵՐ... ԵՒ ՄԵՌՆԵՐ

Երբ աչքի ես անցնում մեր ազգի պատմութիւնը, երբ յիշում ես նոյն իսկ քո մօտիկ անցեալը և այդ անցեալում այնքան շատ մեռած յարգաւորներին...

Այո, երբ յիշում ես թէ որքան հեռագիր, դամբանականներ և սրտածաւիլի ճառեր են կարդացել տարիներ բոլոր և կարգում են, ակամայ հարց ես տալիս.—յիրաւի, միթէ այդչափ նշանաւոր մեռելներ ունենք—ուրեմն և նշանաւոր կենդանիներ:

Երևի ունենք:

Իսկ երբ աչք ես ածում շուրջը, երբ ստիպւած ես լինում մի բոլոր յիշել մեր ազգի մեծերին և մտքով հրճել նրանց հսկայ դէմքերի մտապատկերի առաջ, այն ժամանակ կարծես իսկոյն հանդիպում ես քարի, որովհետև այնքան սուղ մեր աչքի ընկնող մարդկերանց շարքում չես գտնում մի ճշմարիտ մեծութիւն, որի առաջ գլուխ խոնարհէիր անբարբառ:

Թերևս հեռից աւելի չքնաղ է տեսարանը, բայց երբ մօտենում ես, երբ ծանօթանում ես այնքան պաշտելի անուններ կրող անձերի հետ, այն ժամանակ քո առաջ բացում է մի ստակալի ամայութիւն, կամ լաւ է ասել—իսկական հայի անցեալը, որը գտնում ենք պատմութեան մէջ:

Չնչին հաշիւներով և ինտրիգներով տարւած մարդիկներ:

Բոլորը զբաղւած իրենց ողորմելի եսի փափուկ գոյութեան խնդրով:

Խճճանքների սիրահար և անկիւններում բամբասող քաթառների նման՝ զբաղւած օրւայ չարիքներով:

Բայց յանկարծ երբ քաթաւորութիւն է ունենում այդպիսի մի հասարակ մարդ մեռնելու, ահա անկիւններից բարձրանում են նրա վաղեմի թշնամի ընկերները և հազար ու մի բարեմասնութիւններ վերագրելով հանգուցեալին՝ սկսում են հրապարակօրէն թըմբուկ զարնել և կեղծ կոկորդիլոսի արցունքներ թափել:

Հազարաւոր հեռագիր, ցաւակցական ճառեր և դամբանականներ են տեղում աշխարհի ծայրերից, ուր հայի շունչ կայ:

Սգում են, հա սգում...

Եւ վերջ չկայ այդ կեղծ սգին, այդ հայկական և ազգային ապուշ խեղկատակութեան:

Բայց մէկը հարցնող չկայ այդ սգորնիւրի պարագլուխներին, թէ ուր էիք այն ժա-

մանակ, երբ այդ մարդը տնային ճիւղերով կենդանի մեռած էր արդէն: Որտեղ էիք, երբ այդ ձեր համակրելի և ասուածներին հաւասար մարդը ամեն բուպէ անհուն գերեզմաններ էր կրում իր կրծքի տակ:

Ինչո՞ւ նոյն իսկ փողոցում հանդիպելիս, ձեր արժանապատուութիւնից ստոր էիք համար գէթ բարեկ այն մարդուն, որին այսօր փառաց ի փառս էք հանում:

Ինչու աշխատում էիք սև բիծ գտնել նրա լոյսի պէս պարզ դէմքին և ինտրիգներ լարել նրա դէմ, որը ինչպէս դուք էք այսօր խոստովանում, իր կեանքը չի խնայել ձեր և ձեր եղբայրների համար:

Բայց այդ միք հարցնիլ:

Որովհետև...

Որովհետև այդպիսի հարցերը հայի գոյութեան ծուծն են շօշափում և դժգոյն դիմակը պատում:

Այդ միք հարցնիլ, որովհետև նման հարցերը սպառնում են պատուի մարդկութեան բեմական կեանքի հնամաշ վարագոյրը, որի յետևում ամբողջ երկրագունդը մի դժբախտ կատակերգութիւն է խաղում:

Այդ միք հարցնիլ, որովհետև այդպէս է պահանջում քաղաքավարութեան դէպի նընջեցեալները տածած մօղայական կուլտը:

Այդ միք հարցնիլ:

Բայց ես հարցնում եմ:

Ես ըմբոստանում եմ դարաւոր կեղծիքների սրբութեան դէմ:

Ես, թոյլ ճճիս, կամենում եմ ասել այն, ինչ որ չեն ասում հզօրները, որոնց ձեռքին է կարծես յաւիտենական պրօզէսի և մարդկային բախտի դերձանը:

Բայց ոչ, ես ասում եմ շատ քիչ բան. շատ քիչ:


Ես այն ես ասում, ինչ ամեն բոլոր կըրկնում է իւրաքանչիւրիս խիղճը իր խեցեղէն ամանի տակ:

Թող բոլորը լսեն, բոլորը կարկամեն և բոլորը ստրկի նման ծուռ կ'սոնարհեն մեքենայական ուղեղի կազմած հաշիւներին, ընդհանուր հօտային ստեղծած անեղծաճանքներին, բայց դարձեալ այդ բոլորից դուրս կայ մէկը, որ ոչ մի հաշիւ չէ ճանաչում, որը ոչ մի փտած անեղծաճ չէ ընդունում բացի այն, ինչ արդարութիւն է և երկնքի ձայնը:

Մինչ մարդիկ չեն լսիլ արդարութեան և երկնքի ձայնին:

Մինչ նրանք չեն նայի իրենց ներսը և չեն ըմբռնի, թէ ինչ է ասում ներքին դատաւորը ամեն մի բոլոր, մինչև այդ վայրկեանը նրանց բոլոր օվսանանները ինձ համար անէծքներ են. իսկ անէծքները՝ օվսաննա, անգործութիւնը՝ գործ, իսկ գործունէութիւնը՝ վատթար:

Մինչ մենք չենք սովորիլ տարրական ճշմարտութիւնը գործադրել, այն է—«Հարկս հարկաւորաց և պատիւս արժանաւորաց» ասացածքի իմաստը իր տեղում, մինչև այդ ժամանակ մեր ամբողջ գրականու-



Թեան պատմութիւնը կը լինի մեռելների դամբանականների պատմութիւն, իսկ մեր իսկական կեանքը հոգեհանգիստների կուլտուր...

Օ՛ մեռելներ... մեռելներ: Երանի թէ իսկապէս մեռած լինէին բոլոր յարգածները, որոնք մեռնելու անգամ արժանի չեն:

Մենկ



ԹԵՄԱԿԱՆ ՏԵՍՉԻ ՈԳԵՒՈՐԻԱԾ ՇԱՐԱ-ԻՐՈՒԹԻՒՆԸ

Շատ յաճախ և համարեա ամեն տեղից գրում են, որ մեր ուսուցիչները հայերէն գրել չգիտեն:

Ես չէի ուզում հաւատալ այդ բանին:

Բայց իմ մի բարեկամս, անցեալ օրը, «Հորիզոնի» № 136 բերելով, ցոյց տւեց ինձ «Ուսուցիչ» վերտառութեամբ մի յօդուած, որի տակը ստորագրւած է Յ. Տէր-Միրաբեան և ասաց հետեւալը.

—Ահա, կարդա հայ ուսուցիչ, մանկավարժի և նոյն իսկ թեմական տեսչի շարագրութիւնն է, այժմ էլ չէս հաւատայ:

—Ես, ես... կը մղմացի ես:

—Կարգաւ և տես, եթէ հայ դպրոցների թեմական տեսուչը այսպէս է գրում, ի՞նչ հալի մէջ կը լինեն աշակերտները...

Ես կարդացի այդ յօդուածը, բայց աչքերիս չհաւատացի, գուցէ ստորագրող «Յ. Տէր-Միրաբեանը» թեմական տեսուչը չէ, այլ նոյնանուն, բայց որևէ խոտաջուրցի,

փոնչի և կամ ներսիսեան դպրոցի Ս դաստան անգրագէտ աշակերտ:

Ես մինչև հիմա էլ այդ բանը իսկապէս որ չեմ իմանում—ուստի առաջ եմ բերում այդ «յօդուածից» մի կտոր և նախարանը, թող «Նախարարայի» ընթերցողները դատեն—եթէ թեմական տեսուչը զգացմունքով ու ոգևորւած ժամանակ այսպէս է գրում—ուրիշ ժամանակ ինչպէս կը գրի: Ահա նա.

«Ո Ի Ս Ո Ի Ց Չ Ի Ս»

«Ղաղարոս, դու էլ այսպէս թողիր մեզ ու հեռացար այս աշխարհից: Մի՞թէ այսպէս վայրկեանապէս դու պէտք է հրսոճեշտ տայիր այն աշխարհին, ուր մարդկանց անհունապէս սիրելի եւ երբեմն էլ ատել գիտէիր: Անշնչացած մարմնիդ մօտ երկուսով սուսնաճացած խօսում էինք քո սիրելիներից ամենասիրելիի, Յովնանէս Թումանեանի հետ, որի համար անընդարար գրելի մեծ հարած էր քո մայր: Ես որբացածի ըզգացմունքով տողորած ասաց. «ուրեմն այսպէս մի վայրկեանում կարող է մի այսպիսի կեանք ոչնչանալ»: Այո՛, բարեկամս, ասացի, անհաստատ է, չենք կարող հաշտել, բայց այդպէս է:

—Ա՛հ, ի՞նչ մեծ է այս կորուստը, ասաց նա, ի՞նչ մեծ է... Մեր մէջ այսպիսի դէմքեր չեն երևում...»

—Մեր գրականութիւնն, ասացի, մանկական հասակից հոգիները ճնշման տակ է պահում եւ մարդիկ երիտասարդութիւն չտեսած՝ արդէն ծերի տպաւորութիւն են գործում: Ի՞նչ են մտքի ու սրտի

բոլոր թափով պարտաւորութիւնները մեր իրականութեան մէջ:

Սուր կակիծը մեր երկուսի էլ սիրաբ քննչեց, մեր մտքերի թեւը կտրեց, լոնցիկը, ամեն մէկս խորասուզեց իր զգացմունքների մէջ:

Ղաղարոսին մօտիկ մարդիկ տեսնում էին, որ այս վերջին տարիս նա այլ ես այն ուրախ, մանկան պէս զարթ մարդը չէ, տեսնում էին, որ մի ինչ որ որ կործում է նրա սիրաբ. բայց քչերը գիտէին, որ գնչուն գուշակած է եղել, որ նա 72 տարեկան պիտի սպրի:»

Յ. Տէր-Միրաբեան

Այս բանը պիտ կարգալ՝ սկզբում լաց ու կոծ, յետոյ andante, իսկ վերջը moderato:

Աշխատատեղերը

- Դուք ծանօթ էք Միքայելեանի հետ:
-Այն էլ ինչպէս:
-Նրանք ի՞նչպէս են ապրում:
-Ինչպէս աշխատաւոր մեղուներ: Իսկապէս որ արժէ նրանց համար սակ, որ շատ քրտինքով են մի կտոր հաց ձեռք բերում:
-Բայց ի՞նչով են նրանք ապրում:
-Ողջ ընտանիքը աշխատում է. հայրը, աչքը չի փակում, ամբողջ զինները ժողովարանումն է անց կացնում, մայրը ամբողջովին զբաղւած է լսողով, որդին ամբողջ օրը ֆուդբոլ է խաղում, իսկ աղջիկը ձեռք ստախոսութեամբ է անցկացնում իսկ ամառը... կաւալներն փնտրելով:

Բուդ

Փ Ե Լ Ի Է Տ Օ Ն

Պ Ա Տ Ա Ր Ա Ն Ո Ւ Մ

(Փոխ. Աւերչենկոյից)

—Ասացէք ձեր անունը, —հարցնում է դատաւորը մեղադրող աղջկան:

—Ռիմսօ Բուլբուլեանց, ասում է աղջիկը և բորբոքում:

—Իսկ ձերը, —գիմում է մեղադրեալին:

—Այսպէս ասած՝ զազէթաչի ենք: Պապիս ազգը Սիրունեանց էր, հօրն ազգը Վարդանեանց, իմ ազգը Սափարեանց: Ասել է թէ ես՝ Միրուն Պատուականեան Սափարեանց եմ:

—Դուք, Ռիմսօ Բուլբուլեանց, Միրուն Սափարեանցին մեղադրում էք, որ նա՛ հակառակ իր խոստման՝ ներկայումս հրաժարում է ձեզ հետ ամուսնանալուց, և բացի այդ՝ նրանից պահանջում էք 110 բուլբլի:

—Այո, ճիշտ է:

Դատաւորը դիմում է Միրունին:

—Միրուն Սափարեանց, ձեր վարմունքն ինձ չափազանց զարմացնում է: Դուք հանգիստում էք մի ջահիլ միամիտ աղջկայ, ընկնում էք նրա ետևից, ծանօթանում հետը,

սիրաշահում նրան, գլուխը պոչոյտ բերում և յանկարծ—ոչ դէս, ոչ դէն, հրաժարում էք հենն ամուսնանալուց, դրանով ջարդ ու փշուր անելով ամեն ինչ, հէնց նոր ծաղկել սկսող մի մանուկ կեանք... Մտածեցէք նրա թափած և դեռ թափելիք արցունքների մասին, մտածեցէք նրա այն չարչարանքների և տառապանքների մասին, որ նա կրում է գիշերները՝ լռիկ-մնջիկ, զգալով, որ չկայ այլևս իր սիրեցեալը, որ ինքը նրան միայն խաղալիքի տեղ է ծառայել:

Սափարեանցն ունեւրը թոթեց:

—Ձէ, պարոն սուգիա, մի ջափա քաշեցէք եղ խաղալիքին՝ հարցնելու, թէ անցկացած շաբթին, կէս գիշերայ սճաթի երկուսին, փայտոնով, հարբած տրաքւած պրիկաշչիկի հետ՝ ճի արած, իրար դիք կպած, նա էլ իր ձեռները սրա դռի արանքը ճխտած, մի ջճաննամն էր գնում...»

—Ի՞նչպէս, ասաց դատաւորը, ունեւրը կիտելով.—մթթէ այդ ճիշտ է: Ռիմսօ Բուլբուլեանց, ճշմարիտ է, որ դուք կէս գիշերին՝ որևէ պրիկաշչիկի հետ, ինչպէս սա է ասում, կառքով գնալիս էք եղել:

—Նա սկի էլ պրիկաշչիկ չէ,—ընդդիմախօսեց Ռիմսօն.—ի՞նչ պրիկաշչիկ. նա օրինաւոր բուլբուլ է:

—Ուրեմն, ճշմարիտ է,—վրդովմունքից

թփրտացող ձայնով բացականչեց դատաւորը.—Դուք այդ բանը չէք ուրանում և, միևնոյն ժամանակ... համարձակում էք սրա վրայ գանգատ ներկայացնել դատարանին՝ չամուսնանալու մասին: Բայց գիտէք օրիորդ Ռիմսօ Բուլբուլեանց, որ ամեն մի կարգին մարդ նոյն ձևով կը վարէր, եթէ սրա տեղը լինէր:

Ռիմսօյի մայրը, որ որպէս վկայ եկել բազմել էր հէնց առաջին նստարանի վրայ, ձեռքը ծնկանը խփեց ու ասաց.

—Համ. գուք էտէնց իք փիքը անձմ: Էտ վիւրդանցի կալքին մարթիք ին էտէնց վարում, չի իլի իմանանք: Բնա...»

—Պնդրում եմ, լոնցէք, յարգելի տիկին: Դուք, Ռիմսօ Բուլբուլեանց, սրա դէմ գանգատում և պահանջ էք ներկայացնում. շատ լաւ իսկ մի բոպէաչափ մտածել էք այն անքուն գիշերներին: այն չարչարանքների ու տառապանքների մասին, որ կրել է այս մարդը, ձեզ իր սիրած աղջկան՝ ուրիշ գրկումը ներկայացնելով:

—Այդ ի՞նչ գարշելի բաներ էք խօսում, պարոն դատաւոր: Ամօթ է մինչև անգամ: Հնապա դա որ պտակելու բանն այնքան ձգում, ձգձգում էր, ի՞նչ իմ մեղն է: Ձէ որ ես ջահիլ աղջիկ եմ—այս բանը պիտի լաւ հասկանաք: Այնքան ձգեց, ձգձգեց,

Իսկական պատասխան

- Այս ինչ է:
- Հետագիր:
- Ո՞րտեղից:
- Հետագրաստից:

ՊՈՊԱՄ ՏԵՐԵՒՆԵՐ

1. Լուսահագի ամուսինը

—Գիտե՞ք որ երեկ ես պատահեցի լուսահագի Պողոս Պողոսեանցին և ասացի...
 —Սպասիր, մեր տղայ, ինչ լուսահագի նա ինքը հօ չի մեռել, նրա կինն է մեռել:
 —Հա էլի, հէնց դրա համար էլ նա լուսահագի է, այսինքն լոյս է իջել նրա հոգու վրայ, և խաւարը վերացել է նրա վրայից...

2. Ամառանոցային հաւաքուժութիւն

—Մայրիկս, մեր հարեանը ինձ համար հաւեր է բերել ու բուն է սարքում նրանց համար:
 —Տես, զգուշացիր, որ հաւերից յետոյ վառիկներ ևս չչայտնեն:

3. Անյաջող ծրագիր

—Սաստիկ ցաւակցում եմ ձեր վշտին, վարդուէի, և միայն մի ելք եմ գտնում: Եթէ քո ամուսինը քեզ դաւաճանել է, դու էլ նոյն կերպով վարելի: Իսկ կըլինի նրան արժանի և դաժան վրէժը:
 —Լաւ վրէժ է: Նա այդ բանին վաղուց է սովորել:

որ այստեղը հասցրեց:

—Է՛, Ռիմսօ, դու լափ գլխից դուրս բաներ ես փչում, հա՛ւ Դուն հօ գիտում ես, թէ ինչի համա էի ձգձգում. ինձ խոստացել էին էնընչենց ֆաբրիկում գլանի պաշկա կապողի տեղ, մինչև իմ վեկալածիցս 12 մանէթ էլ աւել ոտճիկով: Վա, սա հօ մասխարութիւն չէ՞:

—Օրիորդ Բուրուլեանց, աչքի առաջ ունենալով, որ Սափարեանցի ձեզ հետ չամուսնանալու մասին ձեր ներկայացրած զանգատն իր տակը ոչ մի հաստատուն հիմք չունի, իսկ ձեր քաղաքացիական պահանջն էլ, ինչպէս ես եմ կարծում, չունելով իրական նշանակութիւն, փաստացի կողմ, այլ միայն բարոյական բնոյթ, և դէպի ձեր նախկին նշանածն առաջացած գայրոյթի հետեւանք համարելով այն՝ ես կարելոք եմ համարում այդ գործը դադարեցնել:

Ռիմսօն դատաւորի այս վճռական տոնից խիստ զարմացած՝ աչքերը սաստիկ շոտում է:

- Ո՞նց թէ. բաս փողերը:
- Ի՞նչ փողեր:
- Բաս տասնըմէկ թումանը:
- Տէր Աստուած, դու ողորմիր: Ախր ի՞նչ բանի համար:

Ռիմսօն մի առանձին կծու արհամարհանքով նայեց իր նախկին նշանածին ու ասաց.

4. Լուսած գրուի

Գարեգինը դիմում է իր ընկերոջը.
 —Գիտես, Արշակ, գլխումս այժմ շատ հանճարեղ մտքեր են ծագում...
 —Տեսնում ես. ես որ ասում էի քեզ թէ՛ գլուխդ շուտ շուտ լւնայ:

5. Հնարար է

—Աւելի քան հնարար է, որ ամենախելացի մարդը խելակորոյս կերպով սերահարէի:
 —Միանգամայն հնարար է, որ անգրագէտ մարդիկ խորհրդածութիւններ գրել սկսեն:

ԻՆՔՆԱՐՈՒՂԽ ՄՏՔԵՐ

—Ընդհանրապէս վերցրած՝ կանայք մէկու մէկու նման են, մասնաւորապէս՝ մէկը միւսից վատ:

—Փառքը շատ նման է սիրաբիւլի. նա էրը սաղում է հօրը— որդու համար չափազանց մեծ է լինում:

—Սկսեցէք մարդկանց մօտ ճշմարտութիւն խօսել և նրանք, բոլորն էլ, կըփախնեն ձեզնից:

—Բարի խորհրդներից էժան բան չկայ,—բայց փաստաբաններն ու բժիշկներն այնքան ճարպիկ են, որ նրանք այդ բաները շատ թանգ գնով են ծխում:

—Այն մարդը, որ թողնում է իր կնոջը՝ արժանի է յանդիմանութեան. իսկ այն մարդը, որ կին է ուզում, նա արժանի կըրկնակի յանդիմանութեան:

—Երբ այդպէս է, թող ուրեմն իր ձեռքը ինձ տայ:

—Այդ բանը ստիպել անկարող եմ,—ժպտաց դատաւորը: Բայց ինչներիդ է հարկաւոր ձեզ ձեռքը՝ առանց սրտի: Իսկ ի՞նչ կեանք կըլինի...

—Ո՞նց թէ ինչներիդ է հարկաւոր: Նա ինձ, երևի, մի բանի պէտք կըգայ:

—Ո՛վ:

—Ձեռքն, էլի:

—Ո՞ւմ ձեռքը:

—Նրա: Ձախ ձեռքը: Մուֆթա էր ինչ էր, որ այդ բանի համար ութը թուման փող խարջեցի:

—Ի՞նչ ափեղ-ցփեղ բաներ էք ասում: Ի՞նչ ութը թուման:

—Իմ արիւն-աշխատանքով ձեռք բերած փողերը: Մօրս պահ տւած փողերն էր, նըրանից եմ վերցրել: Կարծեցի թէ կարգին մարդ կըլինի—էհ, ասի, թող ձեռքերը թամամ ունենայ. բայց չէ, բանից դուրս եկաւ որ դա, ներքեցէք համարձակութեանս, խողբերի խոզն է եղել:

Դատաւորը զարմացած նայեց Սափարեանցի վրայ: Սա էլ ձախ ձեռքը բարձրացրեց ու օդի մէջ անշնորհ կերպով թափահարեց:

—Փետրից է՛ պարզն սուղիս, անցկացած

—Աշխարհիս երեսին գոյութիւն ունի մի մեծ ու չքնաղ այգի. ովքեր գործն են ցանկանում են ներս մտնել, ովքեր մեղքն են ցանկանում են դուրս գալ: Իսկ նրանք, ովքեր արդէն մէջը եղել են ու դուրս եկել, աշխատում են կրկին վերագործուի:
 Այդ մեծ այգին՝ ամուսնութիւնն է:

ՔԱՐԻԱՆԱՐԱՅՈՒՄ

Սանութ է մտնում մի երիտասարդ կին.
 —Ցոյց տւէք ինձ շրջագրեաններ:
 Գործակատարը ցոյց է տալիս:
 —Այս կանաչը քանի՞ արժէ:
 —Ճիշտ 15 բուբլի:
 —Ի՞նչ. դա չլուծւո՞ւմ է... ութը կըտամ:

—Ի՞նչ էք հրամայում, տիկին, որտեղից որտեղ... ձեզ համար տասներեքով կարելի է, ցանկանում էք... Սպասեցէք... տասներկուսով... է՛, առուտուր միք անի, տիկին, մենք զնի վրայ խօսել չենք սիրում, գնորդ մեզ մօտ «առանց սակարկութեան» են... Տեսէք այնտեղ, պատից փոքրիկ ցուցանակ է կախ տւած այդ մասին... Տասից պակաս չեմ կարող տալ... Ի՞նչ ջանջալն էք, տիկին... լաւ, համեցէք, տարէք...

Եւ այսպէս, եւ այնպէս

—Ես քեզ նախանձում եմ, բարեկամ, դու հըրաշալի կին ունես:

—Հերիք է: Ես նրանից շուտով բաժանելու եմ:

—Ահա թէ ինչ: Այդ դէպքում ես քեզ սաստիկ նախանձում եմ:

տարին կօնկի վրայից փիս զրխկացի ու թիս պկան տակը մնալով՝ լափ կտրւաւ:

—Նշանակում է դժք էք ձեր հաշուով սրա համար արհեստական ձեռք շինել տրւել:

—Հապա, բաս ձի: Դրուստ ութը թուման: Պրուժինայով է (զսպանակով): Բանդաժիստ Տէր-Ասատուրովի մօտն ենք շինել տւել: Առաջ-առաջ ուզում էի առանց պրուժինի առնեմ, բայց յետոյ մտածեցի, թէ չէ՞ որ ես սրա հետ ապրելու եմ—աւելի լաւ է թող պրուժինով լինի:

—Սափարեանց, դուք ընդունում էք, որ ձեր հարսնացուն իր իսկ հաշուով է ձեր ձեռքը շինել տւել:

—Դուդ ըտէնց ա... Համա չէ՞ որ ես էլ եմ դրա վրայ ծախս արել, Պատանցկի բաղն եմ տարել (բուսաբանական այգին), Նիկիտինի ցիրկ տարել եմ, Մուշտայիդ տարել եմ, Դիդուրա*) տարել եմ, ֆունիկուլօրի էն ցոնցօրը պարցրացրել եմ, դէս ու դէն եմ տարել, ջնաննամի որ պուճախն ասես տարել հասցրել եմ: Միխայլովնիկի «Փարադիս» բաղում քանի՞ գամ իրիզնացաց եմ կերցրել, քնթիցը դուս գայ, ուրիշ տեղեր լիմոնով,

*) Թիֆլիսի ծայրին վրաց կեկեղեցի է, ուր կըկուշաթի օրերը ուխտ են գնում շատերը:

«ԱՌԱՒՕՏԻ» ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ

Թաւրիկ, 31 յունիս:

—Պ. Պանիրեանը գրասենեակումն է:
 —Ո՛չ, նա այժմ Փարիզի համալսարանում դասախօսութիւն է լսում:
 —Բայց ո՞վ է նրա պաշտօնակատարը:
 —Պ. Գասպարը:
 —Ե՞րբ կը գայ գրասենեակ:
 —Նա գրասենեակ գալու սովորութիւն չունի, յօգուածները ես ստանում, տանում յանձնում եմ փողոցում իրան. անմիջապէս ուղղում, տպարան է ուղարկում:
 —Դէ՛հ լաւ, այս յօգուածս տուր պ. Գասպարին, ասա, որ իմ խաթրու նստի կենտրոնական շատրմանի մօտը, լաւ կրիտիկայի ենթարկելուց յետոյ, մի պալի-պաղակ էլ վրան ուտի իմ հաշիւն, ու յետոյ տպարան ուղարկի:

Սար-Սաղեանց

Միմեանց լրացնում են

—Չարմանալի բան է, Ղազար, էդ սո՞ց ա էլի, որ մեր Լոոււմը... ներդրութիւն, Պարսկաստանում գեղարեւոտի մինիստր կայ, ինչպէս ասում է Լեոնը, իսկ Ֆրանսիայում—չկայ:
 —Ոչինչ գարմանալու բան չկայ, Յովհաննէս, շատ պարզ է, որովհետեւ Ֆրանսիայում գեղարեւոտ կայ՝ բայց առանց մինիստրի եօլա են գնում, իսկ Պարսկաստանում գեղարեւոտ չկայ՝ բայց մինիստր կայ. միմեանց լրացնում են. այո՛, դու է՛ն ասա, որ նոր Աշխարհում «բանաստեղծութեան» մինիստր կայ. բնա:
 —Դրո՞ւստ:
 —Ախմախ, բա մինչև հիմա էդ էլ չէիր գիտում:
 —Լաւ բան է, արժէ այնտեղ գնալ...

կաթով, սուխարով, զգո՞ւնիով ու բուլկինեղով չայ եմ խմցրել, պնչիցը դուս գայ, էլ սև պիււա, աղով բլիթ, փափուկ զադեր, բոված նուշ, թաղա ֆնդուղ, իլաքի մարօժնի, դիփ էլ հարամ ըլնի. էրկու գամ էլ Սակայեանի կանդիտերսկում չայ եմ խմցրել, չես ասի, պարոն սուղիա, մի գամ «Միմեանց» էլ մտանք, հինգ-հինգ շահի խօղի փող տւինք, չախոխբիլի անուշ արինք... Շաբաթը մի գամ պրաթեկտոր... մին խօսքով լափ քամեցի, եղած չեղածս կերաւ. Հալա սրա մէջն էլ էր մեր քամակից քաշ գալիս...
 —Քաշ գալի՛ս,—մրթմրթաց աղջկայ մայրը.—է՛յ, տուտուց, դուն չէիր ինձ խնդրում, վուր յիս էլ գամ. հիմի կի շառիբ իս մօգօնում. ամուսնի քիզ, պաժարնի, թոկեմէն փախած, փուշ փչանալու, բազմօնիկ, մօթրէտու:
 —Լսեցէք,—ասաց դատաւորը:—Սաֆարեանց, ասացէք, տեսնեմ, ձեր ձեռքը... հանուս է թէ միանգամայն կպցրած է:
 —Պրուժինով պտտում—բացում ա, անսիրտ կերպով պատասխանեց Սաֆարեանցը: Չէ հա, ի՛նչ, չի թէ ուղում ա ձեռքս ջանդակիցս պուք տայ:
 —Ես կը պոկեմ,—ասաց հարսնացուն:—Հապա ի՛նչ էիր կարծում, չեմ պոկի

ԹԱՓԱԾ ԺԱՂԻԿՆԵՐ

1. Ժամանակիս ոգով

—Օրիորդ Վարդուհի, ձեր սիրտն ազնու է:
 —Սիրտը՝ ո՛չ, բայց ձեռքը—այո՛:
 2. «Մաուել է...»
 —Օրիորդ Լիզա, այս ի՛նչ էք կարում:
 —Ոչ թէ կարում եմ, ալլ կարկատում: Բաժինքս եմ կարկատում:
 —Ա՜...
 —Այո՛, երեկայեցէք, բոլորն էլ մաշել, մասամբ չըչիլն է կերել...

3. Ընտանապատասխանութիւն

—Ձեր խօսքերը ինձ չափազանց ազդում են, պ. Յարութիւն. ես պատրաստ եմ հաւատալու նրանց անկեղծութեանը. բայց մի բան ինձ անհասկանալի է. հարսանիքի մասին դուք ոչինչ չէք ասում:
 —Հարսանիք սարքելու մենք ժամանակ կունենանք. ի՛նչ կարիք կայ շտապելու... Այդ ժամանակամիջոցում իմ փոխարէն նոյն իսկ մի ուրիշը կարող է երեան գալ ձեզ հետ ամուսնանալու մտադրութեամբ... ի՛նչ կայ որ... գուցէ ձեզ աւելի լաւ բախտ է սպասում...



Պատճառն ի՛նչ է, ասա, տեսնեմ, որ ամեն մի պատահած ու դէմը անցնող մարդու ութը թուման փեշքէշ անեմ:
 —Ի հարկէ,—ասաց դատաւորը մի քիչ ջղայնացած:—դուք լիակատար իրաւունք ունիք ձեր ընծայած առարկան սրանից յետ պահանջելու, կամ թէ ներկայ դէպքում, ձեռքը տեղահան անելու. բայց ես ցանկանում եմ ձեզ հարց տալ, թէ ինչնեւրիդ է հարկաւոր այդ ձեռքը: Չէ որ դա առողջ մարդուն հարկաւոր չի դա:
 —Ո՛չ, հարկաւոր է,—յամառութեամբ գլուխը թափահարեց Ռիմսօն:—Այո՛, այո՛, հարկաւոր է:
 —Ձեմ հասկանում,—ասաց դատաւորը ուսերը վեր քաշելով:—Ձեր քթիցն էք կախելու այդ, թէ դրանով տան յառակն էք սրբելու:
 —Դա արդէն իմ գործն է: Կարելի է ես ուրիշ մարդ գտնեմ, այդ բանին աւելի արժանի, քան թէ այս... հոգեւոր:
 —Սաֆարեանց, հանեցէք ձեր ձեռքը և տէք դրան:
 —Մենձ ուրախութենով, պարոն սուղիա, դուք որ հրամայում էք, ուղում էք սաղսալամաթ ձեռս էլ պուք տամ,—օձի հայեցք ձգելով ու նրա պէս թշնամով պա-

Թիֆլիսի խաղաղութեամբ

—Այս օրերս ձեզ մօտ մի նորաձեւի վերնաձածկոց—մանտո գնեցի. անձրեկ տակն ընկաւ, տեսէք՝ ինչի՞ նման է այժմ...
 —Ի՞նչ անենք, տիկին... պատա...
 —Ինչպէ՛ս թէ ինչ անել. մանտոս պիտի փոխէք:
 —Անկարելի է... Դա ձեր մեղն է...
 —Ի՞նչ մեղ... ի՛նչ բանում:
 —Դուք մեղանից պիտի և անձրեակալ ձեռք բերէիք՝ անձրեկից պաշտպանելու համար:

ԿԱՐԱՊԵՏ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՃԱՌԸ

Թաւրիկ 14/35


Աղայեանի մահուան առթիւ հոգեհանգիստ կատարեցին տեղիս եկեղեցում. ներկայ էր երկսեռ բազմութիւն, պատարագից յետոյ գերապատիւ Կարապետ եպիսկոպոսը մի զգացած քարոզ խօսեց շուտ շուտ Աղայեանը, Աղայեանը, Աղայեանը կրկնելով և մինչ այն աստիճան, որ արցունքները խեղդեցին նրան: Նա այլևս ձայն չկարաց հանել:
 —Է՛, հալա էս եպիսկոպոսին ուղում են կաթողիկոս անեն, երկու խօսք իրարու չի կարում կպցնել ասել,—խօսեց մինը հասարակութիւնից:
 —Պ. Մարտիրոս, եպիսկոպոսը լաւ կըխօսայ, բայց կորուստը շատ ծանր է. հերսից լաց է լինում,—պատասխանեց միւրը:
 —Բա որ Տաճկաստանում էլի հայերին

տասխանեց Սաֆարեանցը: Համեցէք, կիսաօրիորդ—կիսա տիկին, Ռիմսօ Պետրուզովնա. վայելեցէք: Կարող էք ձեր բուզալտէրի քամազիցը կախ տալ:
 —Յիմարի պէս էք խօսում:
 —Վն, ներեցէք, ամենքս հօ չենք կարալ խելօք ու պրաֆեսօր դառնալ: Բաս էտպէս էլի. փեշքէշը յետ էք խլում:
 Նա իր դէմքին թունաւոր արտայայտութիւն տալով՝ նայեց պառաւ Բուլբուլեանցին, որը տարօրինակ կերպով, մի ուրիշ տեսակ, աշխատում էր նրա հայեացքից խուսափել և դիմեց դատաւորին:
 —Բանից դուրս ա գալիս, պարոն սուղիա, որ ամենքը կարան փեշքէշ տւածը յետ խլել, հա:
 —Այո՛, կարելի է, եթէ նա, ընծայողի կարծիքով, պարտ ու պատշած կերպով յարգանք չի ցոյց տւել կամ ընծային արժանի չի եղել:
 —Ա՜ն. բաս ըտեհց ան, լաւ, օխայ, շատ լաւ: Ապրի քո արևը:
 (Կըշարունակելի)
 Գ. Բարուրեանց



—Բու կարծեցով, հայերուս գրութիւնը հիմի
լաւ է քէ Արցախին ժամանակով:
—Իմ կարծեցով հայերուն գրութիւնը այն ժա-
մանակ լաւ կ'ըլէնէր, երբ այլևս . . . մի հայ չէն
թողնելու..

ՕՏԱՐ ԻԻՍՄՈՐ



—Արի՛ցա, չես կարծո՞ղ մի լաւ ու սիրուն կին
գտանել, որ սկզբապէսեմ ու նկարեմ, քնն ճարկաւոր
է նրա բիււարը!
—Էլ ինչո՞ւ եմ ուրիշին գտնում. ինքս այստեղ
չեմ պարտին նկարելէ:

կոտորեն, դէ ասա եպիսկոպոսը հերսից սրտաճաք պիտ լինի էլի:

Սաղ-Սալամաթեան

«ՄՏՔԵՐԻ» ՓՈՒՆԱՆԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԳԻՒՂՈՒՄ

Մեր գիւղի քեղխուղէքը հաւաքւեցին «մտքերի փոխանակութեամբ» մի էլք զըտնելու դպրոցի գոյութիւնը նիւթապէս ապահովելու համար: Նախագահ աւագ-հոգաբարձուն առաջարկեց՝ դպրոցի հաշուով նախ լաւ պիտ լիսնի «բիր-բիր իշխալ գեօզալանախ» լինելու համար, կազմուելի և ապա անցնել «մտքերի փոխանակութեան»: Ժողովը միաձայն և յոռնկայս ընդունեց և իսկոյն անցաւ իրազորութեան: Հարկ եղաւ ծախել փախած վարժապետների իրեղէններն ու նստարանները:

Արբածներին սայլերով (չնայած անձրեւին ու փոզոցնիրի ախտոտութեան) տուն տարան: Մտքերի փոխանակութիւնն անորոշ ժամանակով յետաձգուեց:

Աստի



ՄՏՔԵՐ ԵՒ ԱՓՈՐԻՉՄՆԵՐ

Կին-ամուսինը՝ մի բաւականին թանգ արժեցող անբաւականութիւն է:

N. N.

Միրոյ մէջ կանայք միշտ յիմարութեան են հասնում: Վենեպիտինով

Կանանց խորամանկութիւնները կրկնապատկուում են նրանց տարիների հետ միասին: Գլուխի

Մէքը ամենամահացու հիւանդութիւններից մէկն է:

Ալֆրէդ դը-Միսսէ

Ուր սէր չկայ, այնտեղ կեանք չկայ: ՍԼ. Բերնար

Աստուած մարդկանց տեղ սէր և արցունքներ, — ու ասաց — օգուցէք դրանցով և բախտաւոր եղէք:

Արեւելեան ատած

Միշտ մարդ-ամուսինն է մեղաւոր, երբ կինն իրան վատ է պահում:

Ի. Տուրգենիև

Միրոյ մէջ կորցնում են բանականութիւնը, ամուսնութեան մէջ արդէն նկատուում այդ կորուստը: Սաֆիր

Ով չգիտէ ինչ է սէրը՝ նա բախտաւոր

է. ով սանձահարում է այն՝ նա նշանաւոր անձն է: Վոյլտէր

Ամենալաւ կերպով սիրում են իրենց հաւասարին, քան իրենց տիրոջը: Մոյն

Միրոյ ոյժը հիմնաւ է մեր կրքերի վերայ, նա — թոյլի բռնաւորն է, հերոսի — ստրուկը: Մոյն

Բոլոր կրքերից ամենաուժեղը սէրն է, որովհետեւ նա միաժամանակ զօրով տիրապետում է գլխին, սրտին և մարմնին: Մոյն

Թարգմ. Գ. Բաբուրեանց

Պ ո ս տ - Ա ը կ դ

Աշտարակ. պ. ծննդիկին.— Ուշականայ բանկում քէֆ անողներին, որի մասին գրել էք, հինգ-հինգ թուական ընծայեցէք:

Զարաթալա, պ. Զոլի բալային.— Ձեր լեզուն չենք կարում հասկանալ, բարի եղէք մի թարգմանիչ էլ ուղարկել:

Բագու, պ. Ար. Ազ.— Դուք գրում էք.

«Ինչո՞ւ

Դու ինձ սիրեցիր,

Ապա հրապուրել սկսեցիր,

Ինձ հրապուրեցիր

Կարծես ջերմ սիրով սիրեցիր.

Եւ երբ հարցրի

Ինչո՞ւ

Դու լռեցիր...»

Դուք ինչ էք ասում, կամ ունեն եմ վերաբերում ձեր խօսքերը — ուղիւրձը:

Ես իսկի ձեզ տեսել եմ, որ հրապուրեմ էլ. չէ մեղայ Աստծոյ, այդ շնորհքը ես չունեմ: Շատի վրէն էք ման գալի. ձեր ոտաւաւորները այս տոնով չեն տպւի:

Անյայտ տեղ, Մաշո.— Ձեր ոտաւաւորները «ծնողներին» վերտառութեամբ կը տպւի Գրիստոսի երկրորդ գալուց յետոյ՝ երեք հազար հինգ տարի անց:

Արմատիր, Ղարաքսեցի խննթին.— Շնորհակալութիւն կենացների համար և ներողութիւն յօււածը չտպելու պատճառով:

Մեր աշխատակիցներին.— Կրկնում ենք, որ շատ անգամ ձեր յօււածների չտպագրւելու պատճառներից գլխաւորն այն է, որ գրում էք շատ երկար, ահազին տեղ տալով ձեր սեփական դատողութիւններին՝ բոլորովին ուշադրութիւն չդարձնելով փաստական կողմի և ամփոփ ու կարելոյն չափ պարզ գրելու վրայ: Աշխատեցէք մեղ անմիջապէս տեղեկացնելու օրւայ գլխաւոր դէպքերի մասին, հաղորդել միայն կատարւածը, փաստը: Դա աւելի ուշադրութեան արժանի բան է, քան թէ ձեր մասամբ սրբալ ու աւելորդ դատողութիւնները: Դուք միայն փաստը տեղեկացրէք, թէ չէ մուֆ-

թա դատողութիւն տւոյնքի թիֆլիսի մեր պահեստում շատ ունիք. կլիմայի փոփոխութիւնը:

Ձեր զրաժներից մենք որ բան չենք հասկանում, ասացէք, խնդրեմ, ուրիշներն ինչ հասկանան... Բոլորս էլ մեղք ենք, պիտի խնայիլ...

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՈՐՑԻՆԺ Է յունիսի 19—20-ին

ՄԻ ՁԵՌԱՆԳԻՐ ԲՐՕՇԻՐ

Մ Ա Ր Ի Կ

«ՆԱՄԱԿՆԵՐ ԱՌ ԼԻԱՆ»

Գանողին խնդրում են թողնել «Սաթարալա»-ի խմբագրատանը, զոհացուցիչ վարձատրութեամբ:

ԲԺՇԿԱՊԵՑ

Ա. ԲԱԲԱՅԵԱՆ

Նիւանդներ ընդունելու է, ըստ ստիպողութեան մայիսի 25-ից մինչև սեպտեմ. 10

Կ Ի Ս Լ Ա Ս Վ Օ Գ Ս Կ Ո Ւ Մ

ՕՏԵԼ ԲԵՇՏԱՌԻ

(օ. մ.)

20—12

Բ Ժ Ի Ե Կ

ՓԱՆՕ ՄԱՆԴԵՆԵԱՆ

Մասնագիտութիւն՝ ՄԻՋԱՍԵՌԱԿԱՆ, ՎԵՆԵՐԱԿԱՆ և ԿԱՇՈՒ հիւանդութիւններ:

Ընդունում է հիւանդներ իր սեփականը ամեն օր առաւ. 9—12 և երեկ. 6—9. Ելիգաւետեան փող. № 28.

000—122

Ա.ԽԱՔԱՂԱՔԻ ՍՈՒԼՏԱ ԳԻՒՂԻ

դպրոցի համար արդէն

ՎԱՐՉԻՆԵՆ ԵՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

խնդրում եմ այլևս ինձ չդիմել: 3—2 Եզիկանցէս Մալխասեանց

ԵԱԼՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԾԽԱԿԱՆ ՄԻԴԱՍԵԱՆ ԵՐԿՍԵՌ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

հարկաւոր է թեմականաւարտ

ՑԵՆՉԱԻՐ ՈՒՍՈՒՑԻՉ

լեզուների, առարկաների, երգեցողութեան և եկեղեցու խմբագրատութեան: Դասերի թիւը 30, ոտճիկ տարեկան

720 ԲՈՒԲԼԻ ԱԻԵԼԻ ՈՉԻՆՉ:

Դիմել հոգաբարձութեան Ялта, Таврич. попечительству Церковно-приходского армянскаго училища. 5—2

ԲՈՂՈՐՈՎԻՆ

!! ՉՐԿԱՆ ԱՅԼԵԻՍ ՀԻՒԱՆԴՆԵՐ !!

Եթէ Դուք հիւանդ էք սֆիլիսով, տրիպերով, շանկերով, սեռական թուլութեամբ, կամ Ձեր առողջութիւնը քայքայած է ծանականութեամբ—պահանջեցէք «Հանրամատչելի բժշկարան գաղտնի հիւանդութիւնների աղամարդու, կանանց միզասեռական օրգանների», նկարներով և բաղամիտ բէցէպտոներով մօտ 250 երես: Գինը ճանապարհածախսով ու վերադիր վճարով 1 ր. 30 կոպ: «Ժողովրդական բժշկարան-ձեռնարկ», չափահասների և ամեն տեսակ հիւանդութիւններ բժշկելու համար, բացի գաղտնի հիւանդութիւններից, առանց բժշկի օգնութեան մօտ 400 երես. գինը ճանապարհած. վերադիր վճարով 1 ր. 40 կոպ: Երկու գիրքը միասին 2 ր. 50 կոպ. (կարելի է մարկաներով): Միակ պահեստը Ս. Պետերբուրգ, Петербург. сторона, Большой просп. № 56—609 Я. К. Петерсь 484 (Կ. հ. շ.) 0—9

I-ին Խ Ո Ն Ա Ր Ա Ր Ա Կ Ա Ն Կ Ո Ւ Ր Ս Ե Ր

Հրահատար կուրս լեկցիաներ «ՊԱՍԻԱՅ ԵՒ ՈՒՏԻՍԻԱՅ ԶԱՇԻ» ինքնուսուցման համար. մօտ 1000 բէցէպտ կերակուրների, խմիչքների, թխածքների, կօմպօտի, մուրաբաների քաղցրեղէնների և կարկանդակների և այլն: 300 երես խիտ սպազբած, գինը ճանապարհածախսով վերադիր վճարով 2 ր. 60 կ.: Ցուցմունքներ ինչպէս կանոնաւոր կերպով տանել տնային սնտեսութիւնը և պատրաստել տնային համեղ ու սննդարար ճաշ, միսը կոտորելու և սեղանը զարդարելու մասին յաւելածով, մօտ 100 երես, նկարներով: Գինը 1 ր. 20 կ., երկու գիրքը միասին 3 ր. 35 կ. (կարելի է մարկաներով). պահանջներով դիմել բացառապէս Я. К. Петерсу, С.-Петербург, Петербургск. сторона, Большой просп. № 56—609, 483 0—9 (Կ. հ. շ.)

40 օր! ՉՐԻ!

Եթէ դուք 40 օրայ ընթացքում չէք սովորի ազատ խօսել, կարդալ և գրել գերմաներէն, ֆրանսերէն, անգլիերէն և լատիներէն նորագոյն մեթոդով կազմած մեր ձեռնարկներով (ուրիշները բեկլամ են):
ՓՈՂԸ ՅԵՏ ԵՆՔ ՎԵՐԱԴԱՐՁՆՈՒՄ
Մի ձեռնարկի գինը ճանապարհածախսով վերադիր վճարով արժէ 1 ր. 10 կոպ., երկուսը—1 ր. 90 կ., երեքը—2 ր. 80 կ., չորսը—3 ր. 65 կ.:
Պատւէրները կատարում է միակ պահեստը ամբողջ Ռուսաստանի համար. Ս. Պետերբուրգ, Петербургск. сторона, Большой пр. № 56—609, Я. К. Петерсь. 482 00—9 (Կ. հ. շ.)

== Լոյս տեսաւ առանձին գրքով և վաճառում է ==

Ն Ա Ր-Ի Ո Ս

ՊԱՅԲԱՐ

Վ Է Պ

ԳԻՅԵ Է 75 կօպէկ

Գլխաւոր պահեստը «Գոտտոնընըրզ» գրախանութում, ուր և դիմում են գումարով գնողները:



Первокл. ресторакъ „АННОНА“



„Здание Архитестического Общества“

Сод. Я. Т. Бондаренко Ежедневно отъ 2 час. до 5 час. пополудни и вечеромъ отъ 10 час. до 2-хъ час. ночи. играетъ вновь приглаш. италънскій струнный оркестръ, съ пѣніемъ, участіемъ пѣвиць—Г-жи Сакко и Марія Оландезе и баритона Джелларо Оландезе, подъ управленіемъ САККО.

ЗАВТРАКИ отъ 11 час. до 1 час. дня 80 к. Обѣды, отъ 2 час. до 6 час. пополудни: изъ 2-хъ блюдь—60, трехъ—90 к. и четырехъ—1 ր. 20 к. Кухня Европейская и Азіятская; билліарды. Имѣются кабинеты. отъ жары можно спастись только въ

„АННОНА“

25—11



Բ Է Ս Տ Ո Ր Ե Ն - Ճ Ե Շ Ե Ր Ե Ն

„ԴԻԼԻ ՊՈՒԶՈՒՐ“

Քաղաքի կենտրոնում, ամենայարմար տեղ թամամշեան քարվանսարայի տակ

ՄԻՅՏ ԹԱՐՄ ՄԹԵՐՔԻՅ

— Եւրոպական և ասիական-կովկասեան ճաշացուցակ —

Հնտիր ըմպելիներ, զով կաքինետ-սենեակներ մաքուր խոհանոց ու պատրաստակամ ծառաներ

25—11





—Ներեցէք, որ ես անհանգստացրի ձեզ, դուք կարդում էիք. իսկ ձեռք ախպէս անբարոյարարի է...
—Անի խելօք է քան հեծնողը—դ՛իմիչ անցէք: